

Մերի Ս. Քեչիշյան

ԲՐՈՆՋԵ ԳՈՏԻՆԵՐԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԶԱՐԳԱՆԱԽՇԵՐԸ

Ըստ Լոռու և Սևանի ավազանի գտածոների*

Բանալի բառեր – գոտի, գարդանախշ, Լոբուտ, Լճաշեն, բրոնզ, մետաղագործություն, արվեստ, պատկեր, հորինվածք, պաշտամունք:

Մուտք

Կիրառական արվեստի պատմահնագիտական, արվեստաբանական և իմաստաբանական վերլուծության համար կարևոր նշանակություն ունեն ուշ բրոնզի (մ.թ.ա. XV–XI դդ.) և վաղ երկաթի (մ.թ.ա. X–VII դդ.) դարաշրջանների մետաղագործական արվեստի առարկաների, առանձնապես բրոնզե գոտիների գեղարվեստական հարուստ պատկերազարդումները: Նրանցում են նյութականացվել այդ հեռավոր ժամանակներում և ավելի վաղ ապրած մարդկանց հոգևոր ընկալումներն ու պատկերացումները:

Ընդհանրապես, զարդարիկ տարրը կիրառվել է արվեստի բոլոր բնագավառներում, որի ուսումնասիրությամբ որոշակի պատկերացում ենք կազմում հին հայկական զարդարվեստի ծագման, ակունքների և զարգացման օրինաչափությունների մասին: Այն մեծապես կարևորվում է հայ ժողովրդի ծագումնաբանության, բնակության վայրի, տեղաշարժերի, այլ էթնիկ այլ խմբերի հետ ունեցած առնչությունների, հատկապես մշակույթների փոխներազդման խնդիրների պարզաբանման համար: Գոտիները ոչ միայն ամբողջացրել են Հայաստանի հնաբնակների տարազը՝ լինելով դրա անբաժան մասը, այլև իրենց հերթին եղել են զարդարուն, ուստիև զարդարվեստի ուսումնասիրության կարևոր սկզբնաղբյուրներ են:

*Հոդվածն ընդունվել է տպագրության 10.03.2014:

Ինչպես ժայռապատկերային արվեստի կամ խեցեգործության, այնպես էլ մետաղագործական արվեստի, իսկ որոշակի յուրակերպությամբ նաև՝ բրոնզե գոտիների պատկերագրական-զարդարիկ նյութը քաղվել է բնությունից, բուսական և կենդանական աշխարհից ու առօրյա կյանքից:

ՄՇԱԿՈՒՅԹ

1. Բրոնզե գոտիների ընդհանուր պատկերագրությունն ըստ խմբերի, զարդանախշերի և թեմատիկ հորինվածքի

Ձեռագրագետ, արվեստաբան **Աս. Մնացականյանն** իր «Հայկական զարդարվեստ» արժեքավոր աշխատությունում նկատել է, որ հայ զարդանկարչության բոլոր հիմնական մոտիվների հիմքում նյութական կոնկրետ սկզբնապատճառներ են՝ բնության և հասարակական ուժերը: Դրանք սկզբում ունեցել են որոշակի իմաստ և գործառույթ, բայց ժամանակի ընթացքում աստիճանաբար մշակվել են՝ հեռանալով նյութական հիմքից և նախնական տեսքից, որի շնորհիվ էլ ձևավորվել են նոր ու բազմապիսի զարդաձևեր¹:

Հետաքրքիր դիտարկում է կատարել արվեստաբան, ազգագրագետ **Ս. Դավթյանը**. «Ուշագրավ է, որ բրոնզեդարյան նախշերի հետ հարազատորեն մերվել, միացել են բոլոր ժամանակների նորանոր նախշերը, որոնք իրենց գրավիչ ներդաշնակությամբ կազմում են ժողովրդական ստեղծագործության գանձարանը»²:

Բրոնզե գոտիների ուսումնասիրմամբ զբաղվել են նաև ազգագրագետ **Խ. Սամվելյանը**³, հնագետներ **Հ. Մարտիրոսյանը**⁴, **Հ. Իսրայելյանը**⁵, **Հ. Մնացականյանը**⁶, **Վ. Ավետյանը**⁷, **Ս. Եսայանը**⁸, հայ աստղագիտության պատմաբան **Բ. Թումանյանը**⁹ և այլք:

Գոտիների պատկերագրությունում շատ են բուսանախշերը, պաշտամունքային խորհրդանշանական զարդանախշերը, հատկապես կենդանանախշերը: Հ. Մարտիրոսյանը, անդրադառնալով Հայաստանի բրոնզե գոտիներին, դրանք բաժանել է մի քանի խմբի.

ա) հարթ մակերեսով գոտիներ,

Ջ (ՃԲ) փարի, թիվ 1 (45) հունվար-մարտ, 2014

Չ էլն համահայկական հանդես

1 Տե՛ս **Մնացականյան Աս. Շ.**, Հայկական զարդարվեստ, Եր., 1955: Տե՛ս նաև՝ Հայ ձեռագրային զարդանկարչություն, Եր., 1978, էջ 5:

2 **Դավթյան Ս. Ս.**, Հայկական կարպետ, Եր., 1975, էջ 42:

3 Տե՛ս **Սամուելյան Խ.**, Հին Հայաստանի կուլտուրան, հ. 2, Եր., 1941, էջ 162:

4 Տե՛ս **Мартirosян А. А.**, Армения в эпоху бронзы и раннего железа, Е., 1964; **Նույնի**, Ուշ բրոնզեդարյան բնակավայրեր և դամբարանադաշտեր, Եր., 1969:

5 Տե՛ս **Իսրայելյան Հ. Թ.**, Հայաստանի բրոնզե գոտիների որսորդական տեսարանները, ՊԲՀ, 1966, № 2, էջ 239-248:

6 Տե՛ս **Թումանյան Բ. Ե., Մնացականյան Հ. Հ.**, Բրոնզե դարի գոտի-օրացույց, Եր., 1965:

7 Տե՛ս **Ավետյան Վ. Վ.**, Լորուտի բրոնզե գոտու նախշազարդերը, «Լրաբեր հաս. գիտ.», 1984, N 5, էջ 72-77; **Նույնի**, Կակալի ձորի հուշարձանները, «Լրաբեր հաս. գիտ.», 1984, N 7, էջ 87-89; **Ավետյան Վ. Վ., Եսայան Ս. Ա.**, Լոռիում հայտնաբերված բրոնզե գոտիներ, ՊԲՀ, 1981, N 4, էջ 314-317; **Аветян В. В., Биягов Л.**, Новые находки бронзовых поясов, «Լրաբեր հաս. գիտ.», 1977, N 12, էջ 87-89:

8 Տե՛ս **Есаян С. А.** Искусство гравировки Древней Армении по изображениям на бронзовых поясах II-I тыс. до н.э., «Հայ արվեստին նվիրված միջազգային II սինպոզիում», Եր., 1978; **Նույնի**, Ուրարտական գոտիով դամբարան Ջողում, ՊԲՀ, 1979, N 3, էջ 277-280:

9 Տե՛ս **Թումանյան Բ. Ե., Մնացականյան Հ. Հ.**, նշվ. աշխ.:

բ) երկրաչափական պարզունակ կամ բարդ փորագիր զարդերով գոտիներ՝ եռանկյուններով, շեղանկյուններով, պարույրներով, որոնց խորհրդապաշտական-կրոնական նշանակությունը վերջնականորեն պարզված չէ,

գ) կենդանական պատկերներով գոտիներ, որոնք երկնային մարմինների և երևույթների խորհրդանիշեր են,

դ) բարդ կրոնապաշտամունքային հորինվածքով գոտիներ, որոնք ներկայացնում են «սինվոլիկ որսի տեսարաններ..., արևի մարդակերպ աստծո ընթացքը՝ մարտակառքերով, հրեղեն ձիերի, թռչունների, արևների, երկնային լուսատուների ուղեկցությամբ»¹⁰:

Խորհրդանշանակիր պատկեր-նախշազարդով գոտիներ գտնվել են Լոռու տարածաշրջանում՝ Ստեփանավանում, Ակներում (Որնակ), Հաղպատում, Սանահինում, Լորուտում, Կակալի ձորում (Շնող), ինչպես նաև՝ Բջնիում (Կոտայքի մարզ), Ենոքավանում (Տավուշի մարզ, Իջևանի տարածաշրջան):

Բարդ զարդանախշային հորինվածքով գոտիները գլխավորապես կրել են հասարակության մեջ ազդեցիկ դիրքով մարդիկ, հիմնականում ռազմի առաջնորդները և քրմերը: Ծիսական գոտիների պատկերագրությունը ծառայել է նաև որպես օրացույց, ինչպես Սանահինի գոտին (գտնվել է 1946 թ., հողային աշխատանքների ժամանակ): Այսինքն՝ տարածված են եղել նաև գոտի-օրացույցները¹¹:

Հանդիպում են նաև առանց զարդանախշի գոտիներ, ինչպես օրինակ՝ Լճաշենի N 3 դամբարանից և Էջմիածնի շրջանի Աղվեսաձորից գտնվածները: Նման նմուշներ գտնվել են նաև Լոռու մարզի Շնող գյուղի Բովեր (Խառատանոց) հանդամասի տարածքից (պահվում են գյուղի հայրենագիտական թանգարանում): Սակայն անզարդ գոտիները կրոնածիսական նշանակություն չեն ունեցել, ի տարբերություն Սևանի ավազանից և Հայաստանի այլ վայրերից հայտնաբերված հարուստ զարդանախշերով՝ մ.թ.ա. I հազ. սկզբին վերագրվող գոտիների:

Հայկական կիրառական արվեստում տարածված են եղել նաև գորտապատկեր ճարմանդներով արծաթե գոտիները: Հայոց **Նար** դիցուհու պաշտամունքի և բերքի հետ առնչվող **Նուրի-Նուրին** ևս գտնեկիր էր¹², և դա տիկնիկի հանդերձանքի անբաժան մասն էր: Թանկագին քարերով ընդելուզված, փորագրազարդ, հատիկազարդ կամ հյուսածո զարդարանքներով ճարմանդները պատրաստվում էին գորտի տեսքով՝ ըստ ժամանակի հավատալիքների: Գորտի պաշտամունքը տարածված է եղել Հայաստանում՝ պահպանվելով մինչև միջնադար և ավելի ուշ: Այն դիտվել է նաև որպես պտղաբերության խորհրդանիշ: Ըստ ազգագրագետ **Վ. Բողոյանի**՝ գորտի պաշտամունքը, կապված լինելով Նար աստվածուհու հետ, հետագայում վերագրվել է սիրո աստվածուհի Աստղիկին և պտղաբերության, մայրության դիցուհի Անահիտին¹³:

10 **Մարտիրոսյան Հ. Ա.**, նշվ. աշխ., էջ 32-33:

11 Տե՛ս **Թումանյան Բ. Ե., Մնացականյան Հ. Հ.**, նշվ. աշխ.:

12 Հայերն ամռան չոր օրերին անձրև «կանչելու» համար պատրաստում էին կնոջ տեսքով խրտվիլակ, որն Աստծուց ջուր էր խնդրում, իսկ մարդկանց համար՝ հաց:

13 Տե՛ս **Բողոյան Վ. Հ.**, Երկրագործական պաշտամունքի մի քանի հետքեր հայոց մեջ, Հայաստան

Գորտի խորհրդանիշ պատկերը տարբեր ոճավորումներով տարածված է եղել XVIII–XIX դդ. հայկական ոսկերչական արվեստում, փայտարվեստում, գորգարվեստում, ասեղնագործությունում¹⁴: Ազգագրական և հնագիտական նյութերը հավաստում են, որ գորտը կապված էր ջրային տարրերի հետ և հավատալիքների մեջ խորհրդանշել է արգասավորությունը¹⁵: Գորտաճարմանդ գոտիները նաև իբրև հնայիլ էին ծառայում:

Ըստ **Գր. Ղափանցյանի**՝ «Ծովի մար» (Ծովինար, Հեղնար՝ ջրամայր) նշանակում է «ջրում ապրող չար ոգի»¹⁶: Աղձնիքի և Վասպուրականի հայերի մեջ «չար ոգին» կոչվել է «թրպրդ», որը, նրանց պատկերացմամբ, գորտանման բազմոտն արարած էր՝ կապված լինելով կնոջ չբերության հետ, որն իբրև թե ապրում է կնոջ մեջ՝ նրան մատնելով անզավակության: Սա էլ իբրև թե բուժելու իր ձևն ուներ, որը կապված էր դարձյալ գորտի հետ և ապաքինվում էր օձի բերանից ազատված կամ ջրից բռնված, չորացրած գորտից հնայիլ պատրաստելու և կնոջ մեջքին կապելու միջոցով¹⁷: Գորտն իբր վանում էր չարքերին: Սրանից էլ գալիս է այն սովորույթը, որ Հայաստանում կանայք կրում էին արծաթե գորտապատկեր ճարմանդներով գոտիներ:

Գորտի պաշտամունքին առնչվող լավագույն վկայությունն է ուշ բրոնզի դարով թվագրվող լճաշենյան ոսկերչական արվեստի հրաշալի դրսևորումներից մեկը՝ գորտի գարդ–արձանիկը¹⁸: Չի բացառվում, որ կրծքազարդ–գորտը լճաշենցի կինը կիրառել է սնտիապաշտությունից ելնելով, ինչն ավելի է ամրապնդում վերոնշյալ կարծիքները: Այս քանդակն արդեն իսկ կարելի է դիտել որպես մի հորինվածք, որն ամփոփում է գորտին առնչվող ամբողջական խորհրդաբանությունը:

Բրոնզե գոտիներն ուսումնասիրելով՝ հնագետ **Հարություն Մնացականյանը** դրանք առանձնացրել և բաժանել է երեք խմբի¹⁹: Մի խմբում գոտիները նեղ են ու անզարդ, երկրորդ խմբում գոտիների լայնությունը հասնում է 5–8 սմ, որոնք զարդանախշ են (հիմնականում զարդագոյացումը ստացվել է կետագարդերով), իսկ երրորդ խմբում դրանք բավականին լայն են՝ 10–15 սմ, և ամբողջապես ծածկված կենդանիների, թռչունների, սողունների և մարդկանց, ռազմականքերի, լուսատուների և երկրաչափական զանազան ձևերի նրբագեղորեն փորագրված պատկերներով:

Բրոնզե գոտիների պատկերագրական առանձնահատկությամբ, իմաստաբանական և զարդանախշման ձևերի յուրակերպությամբ աչքի են ընկնում հատկապես Սևանի ավազանից և Լոռուց հայտնաբերված երկու նմուշները:

տանի պետական պատմական թանգարանի «Աշխատություններ», հատ. 3, Եր., 1950, էջ 7–10:
14 Տե՛ս **Նահապետյան Ռ.**, Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը, Եր., 2004, էջ 167:

15 Տե՛ս նույն տեղում, էջ 168:

16 **Капанцян Г.** Хеттские боги у армян, Е., 1940, с. 43.

17 Տե՛ս **Նահապետյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 168:

18 Տե՛ս **Ավետյան Վ. Վ.**, Սևանի ավազանի բրոնզեդարյան ոսկերչության պատմությունից, ՊԲՀ, 2000, N 3, էջ 236, նկ. 2: **Мартirosян А. А.**, նշվ. աշխ., էջ 105, աղ. IX, նկ. 11:

19 Տե՛ս **Թումանյան Բ. Ե.**, **Մնացականյան Հ.Հ.**, նշվ. աշխ., էջ 24:

2. Բրոնզե գոտիների զարդանախշային և հորինվածքային վերլուծությունն ըստ Լճաշենի և Լորուտի ուշ բրոնզեդարյան գոտիների

Խ. Սամուելյանի, հետազայում նաև **Հ. Մնացականյանի** կարծիքով, բրոնզե գոտիներն ունեցել են տարբեր գործառույթներ: Դրանք ծառայել են որպես զարդ, իսկ երբեմն էլ, առավել լայն նմուշները՝ որպես լրացուցիչ զրահ, որը կարող էր պաշտպանել զինվորի որովայնային մասը: Ավելին, Հայկական լեռնաշխարհի հնաբնականների մոտ գոտին ունեցել է նաև մոզական նշանակություն: Ըստ հին հավատալիքների՝ պաշտամունքի գոտին «թալիսմանի» դեր է կատարել, որը պաշտպանել է չարքերից, ապահովել է հաջողություն, բերել երջանկություն²⁰: Գոտին եղել է նաև իշխանության խորհրդանիշ, և դրա չափերով ու զարդանախշերի ճոխությամբ է որոշվել տիրոջ կարողության չափը²¹:

Բ. Պիտրովսկու կարծիքով, գոտու պաշտամունքը կապված է երկնքի, երկնականարի (kamar, այն է՝ «քամար») պաշտամունքի հետ²²: «Kamar» տերմինն իմաստաբանորեն համապատասխանում է հին հայկական կամարին և պարսկական gamar-gamand, այն է՝ «գոտի», «կամար», «աղեղ», «պարսատիկ», և վրացական gved-i, այն է՝ «երկնային գոտի», «երկնականար», «ծիածան» եզրույթներին²³:

Լճաշենից հայտնաբերված և հորինվածքային նրբագեղությամբ աչքի ընկնող բրոնզե գոտին թեև ամբողջական չէ²⁴, սակայն պահպանված կենտրոնական մասի բեկորի զարդանախշից կարելի է որոշել դրա իմաստաբանությունը, նաև պատրաստման ձևը (տես **Նկ. 1**):

Փորագրման տեխնիկայով գոտու բեկորի վրա պատկերվել են երկու որսորդ, երկու ձի, սրանց վերևում՝ ձուկ, արևի սկավառակ: Գոտու երիզային մասը զարդարված է երկզույզ պարույրազարդով, սրանից վեր, նեղ գոտու մեջ արմնկաձև կամ եղնանախշ ժապավենագոտի է: Որսորդները պատկերված են թռչնադիմակով, ընդգծված է նրանց սեռական հատկանիշը, իսկ մարմնի վրա արմնկաձև նախշեր են և կետիկներ: Ձեռքերին կա նետ ու աղեղ, ինչը վկայում է գինատեսակի այս ձևի կիրառելիության մասին²⁵: Սրա վերաբերյալ հղելով պատմահայր Մովսես Խորենացուն՝ **Հ. Իսրայելյանը** նշում է, որ «լայնալիճ» աղեղը բնորոշ է բրոնզեդարյան Հայաստանի որսորդական զենքերին²⁶: Զարդանախշ-ձիերի պատկերները լցված են գծերի ու կետերի շարքերով: Հ. Իսրայելյանը գտնում է, որ ձիերի վերևում պատկերված է ձուկ²⁷, որն ավելի շատ

20 Տես **Սամուելյան Խ.**, նշվ. աշխ., էջ 89: Տես նաև՝ **Мнацаканян А. О.** Археологические находки в селении Басаргечар Арм. ССР, «Краткие сообщения института истории материальной культуры», М., 1955, вып. 60, с. 43.

21 Տես «Հայկական համառոտ հանրագիտարան», հ. 1, Եր., 1990, էջ 687:

22 Տես **Пиотровский Б. Б.** Археология Закавказья, Л., 1949, с. 95.

23 Նույն տեղում, էջ 95:

24 Տես **Իսրայելյան Հ. Ռ.**, նշվ. աշխ., էջ 239, աղ. 1, նկ. 1:

25 Տես **Մարտիրոսյան Հ. Ա.**, նշվ. աշխ., էջ 30:

26 Տես **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, Ե., 1961, էջ 102: Տես նաև՝ **Իսրայելյան Հ. Ռ.**, նշվ. աշխ., էջ 240:

27 Տես **Իսրայելյան Հ. Ռ.**, նշվ. աշխ., էջ 240:



Նկ. 1

նմանեցնում ենք թռչունի: Նրա կարծիքով, գոտի պատրաստող վարպետն այս պատկերներով ցանկացել է ներկայացնել որսի մոգական արարողությունը՝ արտահայտելով երկնքի, երկրի ու ջրի կապը (արև, որսորդներ, ձուկ)²⁸: Գոտու վրայի ձիերը, որոնք առասպելական կենդանիներ են, կապվում են արևի ու ջրի հետ²⁹: Հենց ձիերի վերևում էլ պատկերված է ձուկը: Հայաստանի տարածքից հայտնաբերված հնագիտական տարատեսակ իրերի վրա արևի խորհրդանիշը պատկերվել է նաև ուղեկից կենդանիների հետ (առյուծ, ձի, խոյ և այլն):

Հ. Մարտիրոսյանը նշում է, որ թռչունները հանդես են գալիս գարնան արևի հետ՝ նրա տեսքով, առյուծը՝ արևի, իսկ ձին «արևի մշտնջենական, անփոփոխ ուղեկիցն է տարվա բոլոր եղանակներին»³⁰: Նրանք խորհրդանշում են նաև երկնային աստվածներին, որոնք որսի ընթացքում օգնում կամ խանգարում են³¹: Ըստ հին հավատալիքների՝ արևը շարժման մեջ է արագավազ կենդանիների, այդ թվում և ձիերի օգնությամբ, ինչը հաստատում է հնագիտական նյութը, որոնցում ձիերի պատկերները միշտ վազքի մեջ են:

Սակայն, մեր կարծիքով, ձուկը ձիերի վերևում պատկերվել է «թռչնի» իմաստով, քանի որ իր հերթին ձուկը մարմնավորում է անձրևի իմաստը³², իսկ Սևանի ավազանում շատ են ջրային թռչունները: Ու քանի որ անձրևը երկնային տարր է, ապա նկատելի է ձուկ-թռչուն-երկնականար սերտ աղերսը:

Գոտու հորինվածքային պատկերագրության շարժը ձախից աջ է: Թվում է՝ որսորդները ձգտում են առջևից հարձակվող ինչ-որ կենդանուց պաշտպանել արդեն ընտելացված ձիերին: Սա հավանական մի ենթադրություն է, քանզի բացակայում է գոտու մնացած մասը:

Երկու դիտարկում ևս.

Որսորդը չէր կարող նետ արձակել ձիերի վրա (դրանց արդեն սանձված լինելը նշանակում է, որ ընտելացված են): Եղևնաձև պոչով նետը կարծես խրված է երկու ձիերի և երկրորդ որսորդի միջև: Նշանակում է՝ նետն արձակվել է ձիերին խանգարող թռչնի վրա: Ինչպես նշեցինք, պատկերի՝ ձուկ լինելու հավանականությունը քիչ է: Սակայն նշենք նաև, որ Լորուտի գոտու վրա ձուկը պատկերված է ձիու վերևում, մի տարբերությամբ, որ պատկերը հմտորեն է արված և հստակ երևում է:

28 Տե՛ս նույն տեղում:

29 Տե՛ս նույն տեղում:

30 Մարտիրոսյան Հ. Ա., Գիտությունն սկսվում է նախնադարում, Եր., 1978, էջ 137:


31 Տե՛ս Есаян С. А., նշվ. աշխ., էջ 4:

32 Տե՛ս նաև՝ Իսրայելյան Հ. Ռ., Երկվորյակների պաշտամունքի հետքեր հին Հայաստանում, ՊԲՀ, 1980, N 3, էջ 223:

Որսորդները թռչնադիմակով են: Այսինքն՝ նրանք որսի են ելել թռչուններին այդօրինակ կերպարանքով խաբելու և որսալու:

Ջուգահեռելով նշենք, որ հին վրացական կիրառական արվեստի սնունդներից շատերի վրա ևս կենդանական պատկերների հետ, խորհրդանշանային տեսարաններում հաճախ է պատկերվում պտղաբերության պաշտամունքը խորհրդանշող ձուկը³³: Ուշ բրոնզեդարյան և երկաթի դարով թվագրվող նյութերի, նաև գոտիների սիրված զարդանոտիվը «հոսող պարույրն» է, որն, ըստ **Ս. Եսայանի**, խորհրդանշում է արևի հավերժ շարժումը³⁴:

Լճաշենից հայտնաբերված գոտու բեկորը կենդանական, մարդկային և երկրաչափական զարդանախշերի հիման վրա ստացված ռիթմիկ հորինվածք է, որը թույլ է տալիս բացահայտել նախնադարյան մարդու հոգևոր աշխարհը, նրա գաղափարներն ու ընկալումները, տալ նոր մեկնաբանություններ: Զարդանախշման վերոհիշյալ պատկերը իմաստային ձևով վկայում է որսորդության վերելքի և ուշ բրոնզեդարյան բնապաշտ մարդու հավատալիքների մասին:



Նկ. 2

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև Լորուտի գոտին (տե՛ս **Նկ. 2**), որը հայտնաբերվել է 1979 թ., Թումանյանի շրջանի Լորուտ գյուղի վերին Թաղ կոչվող վայրից³⁵:

Արվեստի այս կատարյալ ստեղծագործությունն իր նախշագարդերով առանձնանում է սյուս հայտնի գոտիներից և բացառիկ է իր տեսակի մեջ: Դրա եռափաթեթ, երկշար, անվերջ պարույրներով հորինվածքի ամբողջական մակերեսում պատկերված է ինքնատիպ ու հետաքրքիր զարգացմամբ, ընթացիկ գործողությամբ մի սյուժե՝ ձիերի, գիշատիչ կենդանիների, ձկների և թռչունների պլաստիկ շարժուն պատկերներով: Աչքի են զարնում պատկերահան վարպետի մտքի ձկունությունը, երևույթների ձիշտ ընկալումը և արտահայտումը, կազմախոսական գիտելիքների մակարդակն ու արվեստագետի ներաշխարհը:

Գոտու պատկերագրության մեջ ուշագրավը բարու և չարի հակադրությունն է, հավերժական պայքարը, որը տրված է կենդանիների դիմամիկ շարժման միջոցով. երկրայինը՝ վագրակերպ կենդանու, երկնայինը՝ գիշատիչ թռչունների, իսկ ջրայինը՝ ձկների տեսքով, որոնք էլ տիպաբանորեն և իմաստաբանորեն կապակցում են բնության երեք տարրերը՝

33 Տե՛ս **Урушадзе Н.** Древнегрузинское пластическое искусство, Тбилиси, 1988, с. 52, рис. 16.

34 Տե՛ս **Есаян С. А.**, նշվ. աշխ., էջ 1:

35 Տե՛ս **Ավետյան Վ. Վ.**, Լորուտի բրոնզե գոտու նախշագարդերը, էջ 72: Տե՛ս **նույնի**, Լորուտի հին և հնագույն մշակույթը, Եր., 2012, էջ 37-44:

հողը-ջուրը-օդը: Վագրը պատկերված է եղջյուրավոր դիմակով և խանգարում է մարդկանց լույս ու արև պարզևող ամենակարող հրեղեն ձիուն՝ խավարի դեմ պայքարում, որը, սակայն, պայքարի վերջնագծում հաղթում է խավարին: Այսինքն՝ գոտին կրում է **լույսի ու խավարի** պայքարի իմաստաբանությունը:

Լորուտից հայտնաբերված գոտու պատկերագրությունը բաղկացած է չորս իմաստային սյուժեից: **Առաջինում** ձախակողմից մթի ու խավարի խորհրդանիշ մահիկին հրում է մի հրեղեն ձի, **երկրորդում** նույն ձիու եղջյուրները մտել են մահիկի մեջ, **երրորդում** ուժեղ հարվածից զրահադիմակն է մխրձվել մահիկի մեջ, իսկ **չորրորդում**, թվում է, հարվածն այնքան ուժեղ է, որ կարծես ձիու գլուխը ձուլվել է մահիկին և այն հրել դեպի խավարը պատնեշող լեռներից դուրս: Նկատենք, որ հնագույն գաղափարագիր-ժայռապատկերներում և բրոնզեդարյան խեցեղենի պատկերագրության մեջ եռանկյունը խորհրդանշում էր «լեռ», իսկ եռանկյունները՝ «լեռնաշխարհ» գաղափարը³⁶: Սա նման է նաև սակրանախշին կամ «թիթեռնիկ» կոչվող նախշատեսակին, որը լայն կիրառություն ուներ միջին բրոնզի դարաշրջանի խեցեղենի նախշագարդման արվեստում (Լճաշեն, Նոր Բայազետ, Մեծամոր, Կարմիր բերդ և այլն):

Գաղափարագիր տեսքով ժայռապատկերներում լուսինը պատկերվում է կիսալուսնի տեսքով³⁷, ինչպիսին Լորուտի գոտու մահիկն է՝ իմաստավորելով չարի և մթան խորհուրդը: Հայաստանի հնաբնականների հնագույն հավատալիքներում ձին իմաստավորում էր արևը՝ որպես լուսատուներին ուղեկցող և պաշտված կենդանի: Պատկերն ուրույն կերպով ցուցանում է, որ կենդանին փորձում է փրկել կենսատու լույսը՝ լուսինը հրելով դեպի լեռներ կամ լեռներից այն կողմ, և հաստատվում է հին հայկական հեքիաթների այն միտքը, որ «լուսինը գնաց սարերի հետև, եկավ արևը»: Այսինքն՝ լուսատուները «սպրում» էին լեռների հետևում կամ «արևն ու լուսինը քույր ու եղբայր էին»³⁸: Մի նրբերանգ ևս. դեպի լեռներն ուղղված և առաջատար ձին է միայն արական սեռի, ինչը մտածել է տալիս, որ հրեղեն ձիերի այս ընտանիքն ուներ իր առաջնորդը, որը կարծես իր վրա է վերցրել ողջ պատասխանատվությունը և ուժը չարի դեմ պայքարում:

Գոտու պատկերագրությունում ձիուն դեմ հանդիման կռվի են պատրաստվել ջրային խավարը խորհրդանշող ձկները, իսկ երկնային չար ուժերի խորհրդանիշ երկարակտուց թռչունները կտցահարում են մահիկի դեմ պայքարող ձիու ոտքերը և նրան օգնող մեկ այլ ձիու մեջքը: Վերջնահատվածում չարքեր խորհրդանշող թռչունները պատկերված են ձիերի ոտքերի տակ՝ կտուցը գետնի մեջ խրած: Այստեղ նկատում ենք ամբողջական մի հորինվածքի թեմայի աստիճանական զարգացում՝ բարու

36 Տե՛ս **Մարտիրոսյան Հ. Ա.**, նշվ. աշխ., էջ 105-107:

37 Տե՛ս **Մարտիրոսյան Հ. Ա., Իսրայելյան Հ. Ռ.**, Գեղամա լեռների ժայռապատկերները, Եր., 1971, նկ. 84: Տե՛ս նաև՝ **Պետրոսյան Ս.**, Հայկական ժայռապատկերներ, Եր., 2005, էջ 224, նկ. 634:

38 **Մնացականյան Հ. Հ.**, Արևապաշտության հետքերը հին Հայաստանում ըստ բրոնզե պեղածո իրերի, Հայաստանի Պատմության պետական թանգարանի (ՀՊՊԹ) «Աշխատություններ», Եր., 1948, N 1, էջ 67-95:

հաղթական ավարտով:

Ըստ Ս. Եսայանի և Վ. Ավետյանի նախկինում հայտնած ընդհանուր կարծիքի՝ գոտու վրա պատկերված են կիսալուսնաձև եղջյուրներով երկնային կովեր, որոնց հետապնդում են սրբազան ցուլերը և եղնիկները: Նրանք երկնային կովերի դերը բացատրում են մարդու հնագույն պատկերացումների և անասնապահության զարգացմամբ³⁹: Համամիտ չլինելով այդ տեսակետին՝ ենթադրում ենք, որ դրանք կովեր չեն, այլ պարզապես ձիեր, ըստ գոտու կենդանիների արտաքին տեսքի (ոտքերի ձևը և դիրքը, մարմնաձևերի սահուն ուրվագծերը): Նկատելի է մի հանգամանք ևս. իրական ձին (ձախում) և վիճարկելի կենդանին (աջում) նմանվում են նաև զարդարանքով: Հետագայում վերանայելով և քննարկելով՝ Վ. Ավետյանը փոխեց իր սկզբնական տեսակետը՝ դրանք դիտելով որպես ձիապատկերներ⁴⁰:

Ձիերի մեջքը զարդարում ամրակապիչներով է, իսկ գոտու քառալարեռաթել կրկնահյուս պարույրները, ըստ Վ. Ավետյանի, հավանաբար իմաստավորում են անվերջ տիեզերական տարածության երեք չար ուժերի՝ երկնային, երկրային և ջրային միասնության խորհրդանիշը և լույսը պատնեշող ամփոփ միտք են պարունակում⁴¹:

Համամիտ չլինելով այդ տեսակետին՝ կարծում ենք, որ Լորուտից հայտնաբերված գոտու այդ զարդանախշ դրվագը չի կարող իմաստավորել չար ուժերի միասնությունը, քանզի պարուրազարդը խորհրդանշում է արև, հավերժ շարժում, կյանք և պտղաբերություն, իսկ արևը հենց լույսի ու կյանքի մարմնացումն է, ամենայն բարիք շնորհողը, կյանքի շարունակությունը և անընդհատ շարժը: Գոտու յուրաքանչյուր պատկեր կամ նախշ խոսում է, այն հիմնական իմաստի արտահայտիչն ու կրողն է: Այս դեպքում պարույրներն իրոք իմաստավորված են, և առհասարակ՝ հնագիտական իրերում ոչ մի նախշազարդ հենց այնպես չի արվել:

Լորուտի գոտում պարուրանախշն արվել է ամբողջական պատկերը սահմանափակելու իմաստով, և ոչ մի պարագայում չի կարելի երկիր-երկինք-ջուր միասնությունը դիտել սոսկ որպես չարության խորհուրդ: Չէ՞ որ այդ եռամիասնությունը պարփակում է բազում հետաքրքիր հրաշքներ ու առեղծվածներ: Իր տարերայնությամբ հանդերձ՝ ջուրն ինքնին կենսատու է, ինչպես և երկիր-երկինքը, որոնք նույնպես աղետաբեր կարող են լինել, բայց շարունակական կյանքում սա սովորական և բնորոշ օրինաչափություն է:

Լորուտի գոտին առանձին հորինվածքային դրվագներով նման է Սանահինի գոտի-օրացույցին, Հաղպատի և Տանձատափի (նախկինում՝ Խոջալու, այժմ՝ Իվանյան) գոտիներին:

Ակնհայտորեն, գոտին պատրաստող վարպետը հմուտ է եղել օրացույցային հաշվարկներում, գաղափար է ունեցել լուսատուների մասին, հետևել արևի և լուսնի տեսանելի շարժմանը և իր երևակայությունը ներհյուսել է դարաշրջանի աշխարհընկալմանը, հավատալիքներին ու պատմություններին:

39 Տե՛ս Եսայան Ս. Ա., Ավետյան Վ. Վ., նշվ. աշխ., էջ 315:

40 Տե՛ս Ավետյան Վ. Վ., Լորուտի բրոնզե գոտու նախշազարդերը, էջ 72-77:

41 Տե՛ս նույն տեղում, էջ 73:

Հայաստանի տարածքում հայտնաբերված գոտիների զարդարուն պատկերազրույթությունները փաստում են Հայոց նախնայաց գիտելիքների, մշակույթի, ինչու չէ, նաև աստղագիտական պատկերացումների բարձր մակարդակը: Յուրաքանչյուր գոտի ինքնատիպ ու կատարյալ է, թե՛ պատրաստման, թե՛ նախշազարդման առումով: Դրանք հայոց կատարողական հմտության խոստուն վկաներն են, որի շնորհիվ հոգևոր ոլորտն իր արտահայտությունն է գտել նյութական արվեստում:

ՄՇԱԿՈՒՅԹ

Մերի Ս. Քեշիշյան – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է բրոնզեդարյան զարդարվեստը, մասնավորապես Սևանի ավազանի հնագույն մշակույթը: Երեք գրքերի, մոտ երկու տասնյակ գիտական և բազմաթիվ հրապարակախոսական հոդվածների հեղինակ է:

Summary

ANCIENT ORNAMENTS OF BRONZE BELTS

According to artefacts of Lori and Sevan basin

Meri S. Keshishyan

The iconography of bronze belts of the Late Bronze (15–11th centuries B.C.) and Early Iron (10–7th centuries B.C.) ages in Armenia is important for the analysis of applied arts of the Highland. They come in various shapes and applications, either ornate or simple. Ornaments on the belts depict humans, animals, plants, geometric shapes and celestial bodies.

Ornamented belts have been found in several archaeological sites in the Republic of Armenia (Lchashen, Akner, Sanahin, Lorout, Bjni), among which the fragment from Lchashen and the belt from Lorout are of particular iconographic interest.

These artefacts attest to the knowledge, level of culture and calendar skills of ancient Armenians.

ՀՀ համախառնազգային համալսարանի հանրագիտական և մշակութային գիտությունների ֆակուլտետի ժամանակակից պատմության և հնագիտության ամբիոնի ղեկավար, 2014

ՎԷՆ համահայկական համալսարան

Резюме

ДРЕВНЕЙШИЕ ОРНАМЕНТЫ БРОНЗОВЫХ ПОЯСОВ

По артефактам из Лори и Севанского бассейна

Мери С. Кешишян

Из орнаментальных бронзовых поясов, найденных на территории Армении (Лчашен, Бжни, Акнер, Санаин, Какали дзор, Лорут) и относящихся к эпохам поздней бронзы (XV–XI вв. до н. э.) и раннего железа (X–VIII вв. до н. э.), следует особо выделить неполное звено из раскопок Лчашена и целый пояс из Лорута. Орнаментальные пояса с изображениями человека, зверей, растительного мира и геометрических фигур, имеют важное значение в трактовке сути древней орнаментики.